ՀՀ ԳԱԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԱԹԵՎ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մեկենասությամբ՝
«ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ ՃԵՐԵՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» (ԱՄՆ)
ԵՎ
«ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ»

9(47.925)
Հ-85
Հշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

3198

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՅ ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԺԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության
Գիտությունների ազգային ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)52
Հ 854

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Վահան Բայբուրդյան**

Հովհաննիսյան, Նիկոլայ
Հ 854 **Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում:**– Եր.: Զանգակ–97, 2002, 32 էջ:

Հ $\frac{0503020913}{0003(01)–2002}$ 2002 թ. ԳՄԴ 63.3(2Հ)52

ISBN 99930–2–318–3

© Հովհաննիսյան Ն., 2002 թ.
© «ԶԱՆԳԱԿ–97», 2002 թ.

Խոնարհումով նվիրում եմ Էրզրումում ծնված մորս, 1915 թ. Մեծ Եղեռնի բոլոր էրզրումցի և ոչ էրզրումցի զոհերի խնկելի հիշատակին, բոլոր նրանց, ովքեր այս աշխարհը թողեցին կարոտով՝ «էրկիրը» շուրթերին:

ՍՈՒՏՔ

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում Հայաստանում և Սփյուռքում, ինչպես նաև օտարերկրյա ուսումնասիրողների կողմից, կատարվել է վիթխարի աշխատանք: Հրատարակվել են արխիվային և պաշտոնական փաստաթղթեր, հուշագրություններ, մենագրական ուսումնասիրություններ, հոդվածների ժողովածուներ, վերապրողների վկայություններ և այլ գրականություն հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, արաբերեն և այլ լեզուներով: Կազմակերպվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներ, նվիրված հայոց ցեղասպանության տարաբնույթ հարցերի քննարկմանը, ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում:

Սակայն, այդուհանդերձ, դեռ շատ անելիքներ կան, բազմաթիվ հարցեր դեռևս լուսաբանության կարոտ են, անհրաժեշտություն է զգացվում շատ խնդիրներ նորովի լուսաբանել, օգտվելով պատմագիտական մտքի նորագույն նվաճումներից:

Մենք առաջին հերթին նկատի ունենք վերջին տասնամյակներում ձևավորված ցեղասպանագիտությունը և նրա ընձեռած մեթոդոլոգիական և հայեցակարգային հնարավորությունները:

Բացի այդ դեռ կան չհայտնաբերված և չուսումնասիրված շատ նյութեր, որոնք սպասում են իրենց անաչառ հետազոտողին, և որոնք, չենք կասկածում, կարող են նոր լույս սփռել XX դարի ամենամեծ ոճրագործություններից մեկի՝ հայոց ցեղասպանության վրա:

Մյուս կողմից համաշխարհային պատմագիտական քննախույզ միտքը հայոց 1915 թ. Մեծ եղեռնին հաջորդած տասնամյակներում հասել է մեծ նվաճումների տարբեր ժողովուրդների ջարդերի և կոտորածների, ցեղասպանության օրինաչափությունների ուսումնասիրության բնագավառում, կուտակել վիթխարի փորձ նրանց դասակարգման և տիպաբանության որոշիչների ոլորտում, որոնք կիրառելի են նաև արմենոցիդի՝ հայասպանության ուսումնասիրության մեջ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն, ծավալի առումով ոչ մեծ, աշխատությունն առաջին փորձն է քննարկելու հայոց ցեղասպանության մի շարք հանգուցային հարցեր ցեղասպանագիտության հիմնարար սկզբունքների լույսի ներքո:

1. ԾԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

XX դարը մարդկության պատմության մեջ մտավ որպես համընդհանուր առաջադիմության, գիտական մտքի աննախընթաց թռիչքի, մշակույթի մեծ վերելքի, ինֆորմատիկայի, համակարգիչների և ինտերնետային համակարգի ներդնման և կիրառման դարաշրջան: Նա միաժամանակ սոցիալական և քաղաքական մեծ ցնցումների, համաշխարհային երկու «տաք» և մեկ «սառը» պատերազմների, մարդկության պատմության մեջ առաջին անգամ միջուկային զենքի կիրառման դարաշրջան էր:

XX դարը պատմության մեջ մտավ նաև որպես ցեղասպանության դարաշրջան: Մարդկության պատմության մեջ դեռևս չէր եղել այնպես, որ մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ ժողովուրդներ ենթարկվեին ֆիզիկական բնաջնջման կամ գտնվեին դրա վտանգի տակ:

Սակայն հարցը միայն դա չէ:

Պատմությունը վկայում է պատերազմների, կոտորածների կամ ջարդերի անհամար դեպքեր: Խոսքը տվյալ դեպքում այն մասին է, որ ազգերին ոչնչացնելու, այսինքն ցեղասպանության քաղաքականությունը բարձացվել է պետական քաղաքականության մակարդակի վրա, այն նախօրոք և «խնամքով» ծրագրավորվում և նախապատրաստվում է, նրա «հիմնավորման» և «արդարացման» համար առաջ են քաշվում զանազան «տեսաղրութներ», իսկ իրագործման համար ստեղծվում համապատասխան մեխանիզմներ:

Մինչև 1944 թ. գիտությանը հայտնի չէր «**գենոցիդ**» եզրը, որի հայկական համարժեքը «**ցեղասպանություն**» է: Մարդկությունը մինչ այդ օգտագործում էր գլխավորապես «ջարդեր» և «կոտորածներ» եզրերը, որոնք իմաստային առումով շատ հաճախ հանընկնում էին «ցեղասպանություն» հասկացողության հետ, կամ մոտ էին նրան, իսկ երբեմն՝ ոչ:

«Գենոցիդ» եզրը հայտնագործել և առաջին անգամ գիտական գրականության և քաղաքական բառարանում շրջանառության մեջ է մտցրել մասնագիտությամբ իրավաբան, ծագումով լեհական հրեա Ռաֆայել Լեմկենը 1944 թ.: Այն արտակարգ հեշտությամբ ուղի հարթեց և առանց դժվարության ճանաչում գտավ գիտական աշխարհում, քաղաքականության բնագավառում և, որը շատ կարևոր է, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների, և առաջին հերթին, Միավորված ազգերի կազմակերպության կողմից, որը 1948 դեկտեմբերի 9–ին ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա պատժ մասին» պատմական նշանակություն ունեցող բանաձևը:

«Գենոցիդ» եզրի հայտնագործումը լոկ առաջին քայլն էր:

Երկրորդ քայլը հանդիսացավ նրա բովանդակության սահմանումը, և այն էլ այնպիսի ձևով, որն ընդունելի լիներ բոլոր ժողովուրդների, քաղաքական ուժերի և պետությունների կողմից: Բարեբախտաբար այդ հարցը լուծվեց դրականորեն:

Ցեղասպանությունը սահմանվեց որպես մի քաղաքականություն, որի նպատակն է բնակչության առանձին խմբերի ոչնչացումն ըստ ռասայական, ազգային և կրոնական մոտիվների ինչպես ուղղակի սպանության միջոցով, այնպես էլ այդպիսի խմբերի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ հասցնելու և մտավոր խանգարումներ պատճառելու ճանապարհով: Այդ հասկացողության մեջ մտնում է նաև կանխամտածված կերպով կյանքի այնպիսի պայմանների ստեղծում, որոնք նպատակաուղղված են այդ խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, այնպիսի միջոցների կիրառում, որոնք հետապնդում են այդ միջավայրում ծննդաբերության կանխումը, երեխաներին բռնի կերպով մարդկանց մի խմբից մեկ այլ խմբի հանձնելը և այլն:

Ընդհանուր գծերով այսպիսին է ՄԱԿ–ի կողմից ցեղասպանության ժամանակակից հասկացողության սահմանումը, որը չի վիճարկվում որևէ մեկի կողմից:

«Գենոցիդ» եզրը դրեց գիտության մի նոր ուղղության՝ գենացիդոլոգիայի կամ ցեղասպանագիտության առաջացման և զագացման հիմքը:

Մի քանի տասնյակ տարիներ առաջ, մենք դեռևս չէինք կարող խոսել ցեղասպանագիտության՝ որպես գիտական նոր ուղղության մասին, քանի դեռ հայոց ցեղասպանությունը մնում էր XX դարի առաջին և միակ ցեղասպանությունը: Սակայն հետագայում, երբ համանման հանցագործություններ կիրառվեցին նաև հրեաների, գնչուների, սլավոնների, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Եվրոպայի տարբեր ժողովուրդների նկատմամբ, ապա պարզ դարձավ, որ մի ժողովրդի կառավարողների կողմից մեկ այլ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման կազմակերպումը դարձել է մեր դարաշրջանի էթնոքաղաքական կյանքի ամենացավալի իրողություններից մեկը:

Ամերիկյան հայտնի ցեղասպանագետ Բարբարա Հարֆը, որը երկար տարիներ համակողմանիորեն հետազոտում է այդ հիմնախնդիրը, գտնում է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում իրագործվել են 48 ցեղասպանություն և արյունալի ջարդեր: Դրանք տեղի են ունեցել Կամբոջայում, Սուդանում, Արևելյան Թիմորում, Ռուանդայում, Բուրունդիում, Ուգանդայում, Հասարակածային Գվինեայում, Բալկաններում և այլ երկրներում[1]: Իսկ եթե դրան ավելացնենք հայերի, հրեաների, գնչուների և մի շարք այլ ժողովուրդների ցեղասպանությունը, որ իրագործվել է մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը և պատերազմի տարիներին, ապա պատկերն ավելի սահմռկեցուցիչ է դառնում:

1 **Barbara Harff,** Rescuing Endangered Peoples: Missed Opportunities. Social Research. An International Quarterly of the Social Sciences, N. Y., Spring 1995, p. 24, 28.

Եվ հենց այդ իրողությունն էլ կյանքի կոչեց ցեղասպանագիտությունը:

Նախկին, ոչ մասնագիտական և սիրողական մակարդակն այլևս չէր կարող բավարարել և գոհացուցիչ պատասխաններ տալ մարդկությանը հուզող այս վերին աստիճանի ողբերգական երևույթին: Անհրաժեշտ էր հիմնախնդրի մասնագիտական, խորը և բազմակողմանի ուսումնասիրություն:

Այդ ծանրությունն իր ուսերի վրա վերցրեց դեռևս երիտասարդ գիտական նոր ուղղությունը՝ ցեղասպանագիտությունը, որի ձևավորումն, կարելի է ասել, իրողություն դարձավ անցյալ դարի 70–80–ական թվականներին: Այսօր ցեղասպանագիտության կենտրոններ են ձևավորվել և գործում ԱՄՆ–ում, Անգլիայում, Շվեդիայում, Հայաստանում, Գերմանիայում, Ավստրիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում և այլ երկրներում:

Ցեղասպանագետների ուշադրության կենտրոնում են այնպիսի առանցքային հարցեր, ինչպես ցեղասպանություն ծնող միջավայրը և պայմանները, քաղաքական և սոցիալ–տնտեսական պատճառները, պետական–հասարակական համակարգը, ցեղասպանություն իրականացնող երկրի հոգևոր–մշակութային մակարդակը, դարերի ընթացքում ձևավորված պատմական ավանդույթները, միջազգային պայմանները և այլն:

2. ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՐՄԱՏՆԵՐԸ

Ցեղասպանագիտությունը, ինչպես ամեն մի այլ գիտություն, ունի ոչ միայն իր նախադրյալները, այլև սկիզբ է առնում որոշակի նախանյութից: Այս դրույթը կիրառելի է նախ և առաջ «գենոցիդ–ցեղասպանություն» եզրի ծագման կապակցությամբ:

Ռաֆայել Լեմկենի համար որպես նախադրյալ իր այդ դարակազմիկ հայտնագործության համար, հիմք է հանդիսացել 1915 թ. հայոց ցեղասպանությունը: Մեր այս պնդումը ոչ թե տեսական մտահանգման արդյունք է, այլ ապացուցվում է փաստերով: Բերենք դրանցից մեկը:

Ցեղասպանագիտության բնագավառում մի այնպիսի անառարկելի հեղինակություն, ինչպսին ԱՄՆ–ի ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն պրոֆեսոր Հելեն Ֆայնն է, որի հետազոտությունների տեսադաշտում մշտապես ներկա են հայոց ցեղասպանության հարցերը, շեշտելով, որ գենոցիդ հասկացողությունը մտցրել է Ռաֆայել Լեմկենը 1944 թ., վկայում է, որ նա դեռևս «1933 թ. առաջարկել էր արգելել նման գործողությունները, ներառյալ այն, ինչ հայտնի էր որպես «Հայկական կոտորածներ», որպես բարբարոսական ոճրագործություն»[2]:

Ուշագրավ է այստեղ մի շատ կարևոր հանգամանք: Լեմկենն առաջարկել է «արգելել նման գործողությունները», այսինքն ցեղասպանությունը, դեռևս 1933 թ., երբ դեռ չէր իրա-

2 See, **Helen Fein**, Problems of Genocide, Canada, 1997, p. 181.

գործվել հրեաների հոլոկոստը, ուստի և այդ ժամանակ միակ և առաջին բարբարոսական գործողությունը կամ ժամանակակից տերմինոլոգիայով ասած ցեղասպանությունը, հայերի 1915 թ. ցեղասպանությունն էր: Հետևաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ լեհացի իրավաբանի համար գենոցիդ հասկացողության և եզրի ծագման և ձևավորման համար նախանյութ և խթան է ծառայել երիտթուրքերի կատարած ոճրագործությունը հայերի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Շարունակելով ցեղասպանագիտության ձևավորման մեջ հայկական նախարմատների թեման, նշենք, որ դրանում սկզբունքային տեղ է գրավում XX դարում հայոց ցեղասպանության առաջինը լինելու հանգամանքը: Այսօր, այդ բնագավառի բոլոր խոշոր, միջազգային ճանաչում ունեցող գիտնականները, որոնք կանգնած են սկզբունքային դիրքերում և տուրք չեն տալիս քաղաքական տատանումներին և նկատառումներին, անվերապահորեն ընդունում են, որ քսաներորդ հարյուրամյակի առաջին ցեղասպանությունը հայերի 1915 թ. ցեղասպանությունն է:

Իհարկե, սա այն դեպքը չէ, երբ առաջինը լինելը որևէ առավելություն է տալիս և դրա համար կարելի հպարտանալ: Դա ուղղակի պատմական իրողություն է, անհերքելի ողբերգություն, որը վերաբերում է ոչ միայն հայերին, այլև համայն մարդկությանը:

Այդ իրողությունը հաստատում է ամերիկյան քաղաքագետ Մայքլ Բենկսը, որը հատուկ նշում է «քսաներորդ դարի առաջին խոշոր գենոցիդի հետևանքով հայ ժողովրդի ցրված բեկորների» առաջացման մասին[3]:

Երուսաղեմի Հրեական համալսարանի պրոֆեսոր Ֆրանկլին Լիթթելի կարծիքով հայկական ցեղասպանությունը նոր դարաշրջանի սկիզբ է. «Կամբոջայի, Սուդանի, Բուրունդիի, Ռուանդայի և Բոսնիայի կառավարությունների ցեղասպան գործողություններից հետո մենք կարող ենք խոսել այս

3 **Michael Banks,** Four Conceptions of Peace, p. 267.

XX դարի մասին, որը սկսվեց հայերի ցեղասպանությամբ, որպես Ցեղասպանության դարաշրջան»[4]:

Իսկ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի մասնագետ Վիկտոր Նադեին–Ռաևսկին հաստատում է, որ «XX դարը վկան է մի քանի իրադարձությունների, որոնք որակվում են ցեղասպանություն: Նման տիպի առաջին և ամենամեծ ոճիրը հայերի և մյուս, գլխավորապես քրիստոնյա, ազգային փոքրամասնությունների կոտորածներն էին Օսմանյան կայսրությունում»[5]:

Համանման կարծիքի են նաև անգլիական պատմաբան Քրիստոֆոր Ուոկերը, ֆրանսիացի Իվ Տերնոնը և շատ ուրիշներ:

Այսպիսին է ժամանակակից ցեղասպանագիտության մեջ տիրապետող տեսակետը գենոցիդ եզրի ծագունքաբանության և ցեղասպանագիտության ձևավորման մեջ հայկական նյութի դերի վերաբերյալ:

Դրա հետ միասին ճիշտ չէր լինի թերագնահատել, առավել ևս, անտեսել այն նշանակությունը, որ ունի հրեական ողջակիզումը ցեղասպանագիտության ձևավորման գործում: Մենք ավելի քան համոզված ենք, որ 1944 թվականին գենոցիդի վերաբերյալ Ռաֆայել Լեմկենի տեսակետը խարսխված էր երկու հիմնասյուների վրա՝ 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական ցեղասպանության և 30–ական թվականներին Գերմանիայում իշխանության գլուխ եկած նացիստների կողմից պատերազմի ժամանակ իրագործված հրեական հոլոկոստի վրա:

Սակայն, կրկնում ենք, 1915 թ. հայկական ցեղասպանությունը XX դարում կիրառված առաջին ոճրագործությունն էր ընդդեմ համայն մարդկության:

4 See, **Franklin Littell,** Problems of Genocide, p. 29.
5 See, **Viktor Nadein–Raevski,** Problems og Genocide, p. 201–202.

3. ՊՈԼԻՏԻՑԻԴ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանագիտության շնորհիվ ավելի ընդլայնվեցին ցեղասպանություն հասկացողության սահմանները և ավելի մանրամասնվեցին և կոնկրետացվեցին նրա հիմնադրույթները: Մենք հատկապես նկատի ունենք երկու սկզբունքային բնույթի նորամուծություն: Առաջինը վերաբերում է «պոլիտիցիդ» կամ «քաղաքական սպանություն» հասկացողությանը, իսկ երկրորդը՝ զոհի կամ վիկտիմիզացիայի հասկացողությանը:

Մինչ այս սկզբունքային բնույթի նորամուծությունները, ցեղասպանությունն ուսումնասիրվում էր բավականին ուղղագիծ կերպով, գլխավորապես «ջարդեր–բռնի տեղահանումներ» շրջանակներում: Մենք հեռու ենք թերագնահատելու նման մոտեցման կարևորությունը և նրա խաղացած մեծ դերը: Դրա շնորհիվ ձեռք բերված արդյունքներն ավելի քան ակնհայտ են:

Բայց վերոնշյալ երկու նորամուծությունների շնորհիվ ցեղասպանության բնագավառում բացահայտվեցին նոր շերտեր, որի հետևանքով ավելի խորացան և կատարյալ դարձան մեր թե գիտելիքները և թե պատկերացումները մարդկության դեմ ուղղված այդ ոճրագործության մասին:

Ցեղասպանագիտության շնորհիվ գենոցիդից անջատվեց պոլիտիցիդը և դարձավ ուսումնասիրության ինքնուրույն առարկա որպես նրա մի բաղադրատարր:

Ըստ ցեղասպանագիտության, եթե ցեղասպանությունն իրականացվում է ելակետ ունենալով ռասայական, էթնիկական և կրոնական որոշիչները, ապա պոլիտիցիդի պարագայում խմբերը նշանակետ են դառնում նախ և առաջ նրանց քաղաքական դիրքորոշման, տվյալ ժողովրդի կյանքում նրանց խաղացած առաջնային և ղեկավար դերի, ինչպես նաև տիրապետող ազգի վարչակարգի նկատմամբ նրանց գրաված դիրքի պատճառով:

Ցեղասպանության իրագործման ժամանակ, այսինքն զանգվածային բնաջնջմանը զուգահեռ, իսկ շատ հաճախ նրանից առաջ, իրագործվում է պոլիտիցիդ՝ ոչնչացվում է տվյալ ժողովրդի ազգային–քաղաքական ղեկավարությունը, քաղաքական, ռազմական, կոնական, հասարակական և մշակութային համակարգի առաջնորդները, որոնք ընդունակ են կազմակերպել դիմադրություն ցեղասպանության քաղաքականությանը, կանխել կամ ձախողել այն: Քաղաքական սպանության նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտրել նրա դիմադրողական ոգին, որը գործողությունների ազատության լայն դաշտ է ստեղծում ցողասպանությունը կիրառող պետությունների և կառավարությունների համար՝ զանգվածային սպանդ կազմակերպելու առումով:

Քաղաքական սպանության (պոլիտիցիդի) դասական օրինակ է հանդիսանում հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը:

1915 թ., նախքան հայերի զանգվածային կոտորածները և բռնի տեղահանումը, երիտթուրքական դահիճները փետրվար ամսին նենգորեն իրագործեցին հայոց զինական ուժի, թվով 60 հազար զինվորների ոչնչացումը:

Հայտնի է, որ պատերազմը սկսվելուց հետո, հայ տղամարդիկ զորակոչվեցին բանակ: Հայերը, որպես Օսմանյան կայսրության հպատակներ, հավատարմությամբ կատարում էին նրանց վրա դրված պարտականությունները: Նրանք հիմնականում ներգրավված էին շինարարության ոլորտում: Երիտթուրքերը սկսեցին հենց հայկական զինական ուժի ֆիզիկական ոչնչացումից: Նրանք լավ էին հասկանում, որ այդ ուժի առկայության պարագաներում, հազիվ թե նրանց հաջողվեր այդպիսի հաջողությամբ և ծավալներով իրագործել հայերին ոչնչացնելու իրենց դիվային ծրագրերը: Հօգուտ այդ տեսակետի են խոսում հայերի 1915 թ. ինքնապաշտպանական մարտե-

ը Շապին–Կարահիսարում, Սասունում, Մուսա լեռում, Ուրֆայում և այլ վայրերում, վանի փառահեղ հերոսական պաշտպանությունը, որոնք հերոսության իսկական օրինակներ են և որոնցով հպարտանալու օրինական իրավունք ունի հայ ժողովուրդը:

1915 թ. ապրիլի 24–ին սկիզբ առավ հայոց պառլամենտական, քաղաքական, կրոնական, հասարակական և մշակութային գործիչների ընտրանու ոչնչացումը: Սպանվեցին թուրքական մեջլիսի՝ պառլամենտի անդամներ, հայ գրականության դասական գրիգոր Զոհրապը և Վռամյանը (Օնիկ Դերձակյան), հայ պոեզիայի փայլուն աստղեր Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը և ուրիշներ, երևելի արվեստագետներ և այլք: Ջերբակալվեցին 600 հայ ականավոր մտավորականներ, որոնց ճնշող մեծամասնությունը բարբարոսաբար ոչնչացվեց գաղթի ճանապարհին:

Դրան հետևեց հայ ազգային կուսակցությունների ղեկավար գործիչների ֆիզիկական ոչնչացումը:

Կոնստանդնուպոլիսում կախաղան բարձրացվեցին հնչակյան կուսակցության 20 գործիչներ Փարամազի (Մաքնոս Սարգսյան) գլխավորությամբ, Զեյթունում սպանվեց Նազարեթ Չաուշը, Վանում՝ Իշխանը և ուրիշներ:

Այսպիսով, պոլիտիցիդի՝ քաղաքական սպանության կիրառման հետևանքով, հայությունը գլխատվեց և մնաց առանց ազգային, քաղաքական և ռազմական ղեկավարության:

Պոլիտիցիդի հիմնադրույթն օգնում է ավելի խորը հասկանալու ցեղասպանություն կոչված երևույթը, ցեղասպան ուժերի ստրատեգիան և տակտիկան, ինչպես նաև ցեղասպանության իրագործման մեխանիզմը: Այդ բոլորը շատ հստակ երևում է, երբ մենք հայոց ցողասպանությունը դիտարկում ենք պոլիտիցիդի պրիզմայով:

Քաղաքական սպանության հիմնադրույթն ամբողջապես ուղղված է հայոց ցեղասպանությունը ժխտելու ամեն տեսակ փորձերի դեմ, ցույց է տալիս այդ «տեսակետների» սնանկությունը և կասկածի տեղ չի թողնում, որ այն, ինչ տեղի ունեցավ

հայերի հետ 1915 թ. Օսմանյան կայսրությունում, բացի ցեղասպանությունից այլ անուն չունի և չի կարող ունենալ:

Անհրաժեշտ է հատուկ զբաղվել ցեղասպանագիտության այդ կարևոր հիմնադրույթի ուսումնասիրությամբ: Նա կարող է նոր, դեռևս անհայտ շերտեր բացել հայոց ցեղասպանության սև էջերում:

Պոլիտիցիդի հիմնադրույթն աշխատում է հօգուտ հայոց ցեղասպանության և նրա միջազգային ճանաչման:

3198

4. ԴԱՀԻՃ ԵՎ ԶՈՀ

Ցեղասպանագիտության երկրորդ նորամուծությունը, ինչպես նշվեց, զոհի կամ զոհի վերածվելու՝ վիկտիմիզացիայի հիմնադրույթն է:

Զոհի հասկացողությունն անբաժան է ցեղասպանությունից: Սակայն այս տեսադրույթի բերած հիմնական նորությունը կայանում է նրանում, որ զոհը ցեղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրականացման ժամանակ: Իրականում դա մի բարդ պրոցես է, որը սկսվում է շատ ավելի վաղ, քան բուն ցեղասպանությունը: Նա ունենում է նախապատրաստական մի ամբողջ շրջան, անգամ դարաշրջան: Այդ բանը շատ լավ է նկատել ամերիկյան հեղինակներից մեկը՝ Մայքլ Բենկսը, որն իր «Խաղաղության չորս տեսադրույթները» աշխատության մեջ, անդրադառնալով այս կամ այն ժողովրդին վիկտիմիզացիայի՝ զոհի վերածելու հարցին, որպես օրինակ նշում է Հարավային Աֆրիկայի սևերին, Մերձավոր Արևելքի քրդերին, լեհերին և հայերին[6]:

Որպես կանոն հալածանքների, խտրականության և, ի վերջո, զոհաբերության նշանակետ են դառնում էթնիկական խմբերը: Բախումնաբանության գծով ամերիկյան մասնագետ Ռոբերտ Գարրի հաշվարկներով, 1945–1990 թթ. աշխարհում 233 էթնիկական խմբեր եղել են նման խտրականության առարկա, այսինքն վիկտիմիզացիայի հավանական թեկնածու[7]: Իսկ

6 **Michael Banks,** Four conceptions of Peace, p. 267.
7 **Ted Robert Gurr, Barbara Harff,** Ethnic Conflict in World Politics, Westview Press, Boulder, San Frasisco, Oxford, p. 5–6.

Բարբարա Հարֆֆը, քննարկելով «ցեղասպանություն–զոհ» փոխկապակվածության հարցը, գալիս է այն եզրակացության, որ «Ցեղասպանության ժամանակ զոհաբերության ենթակա խմբերը որոշվում են վարչակարգի կողմից առաջին հերթին ըստ նրանց համայնքային հատկանիշների, որպիսիք են էթնիկական պատկանելությունը, կրոնը կամ ազգությունը»[8]:

Զոհի վերաբերյալ ցեղասպանագիտության տեսադրույթն հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելու դեպքում, ակնհայտ է դառնում, որ Օսմանյան Թուրքիայի ղեկավարությունը կայսրության տարածքում գտնվող հայությանը որպես զոհ ընտրել էր առնվազն XIX դարի 70–ական թվականների վերջերին, երբ կյանքի կոչվեց «Հայկական հարցի լուծման լավագույն ձևը հայերի ֆիզիկական ոչնչացումն է» բանաձևը, որը որդեգրվել էր սուլթան Աբդուլ Համիդ II–ի կողմից: Դրա զարգացման հաջորդ փուլը հանդիսացավ երիտթուրքերի կողմից առաջ քաշված «մաքուր թուրքական ազգի» ստեղծման ռասայական տեսակետը: Իսկ դա նախատեսում էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների կամ բռնի ուծացում կամ ֆիզիկական ոչնչացում:

Կարծում ենք, անհրաժեշտ է նաև այս շրջանակներում դիտարկել հայոց ցեղասպանության հարցերը:

Այս կապակցությամբ կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել երկու կարևոր հանգամանքի վրա:

Առաջին, ըստ ցեղասպանագիտության վիկտիմիզացիայի վերաբերյալ հիմնադրույթի, եթե կա զոհ, ապա անհրաժեշտաբար պետք է լինի նաև դահիճ, անկախ այն բանից, թե կատարվածը ջարդ է, կոտորած, թե ցեղասպանություն: Հայոց ցեղասպանության դեպքում երկուսի հասցեն էլ շատ հստակ է: Զոհը հայությունը եղավ, իսկ դահիճը Օսմանյան կայսրության սուլթանա–երիտթուրքական վարչակազը, նրա ղեկավարությունը: Անկախ նրա գործադրած բոլոր ճիգերին, «փաստարկներին» և «բացատրություններին», նա մնում է դահիճ:

Երիտթուրքերի դահճի կարգավիճակն այլընտրանք չունի:

8 **Barbara Harrf,** Rescuing Endangered Peoples: Missed Opportinities, p. 24.

Երկրորդ, քանի որ ցեղասպանագիտությունն ընդունում է, որ զոհի ընտրությունը և նրան զոհաբերության ենթարկելը պատմական որոշակի պրոցես է, իսկ դա իրոք այդպես է, ապա դրանից տրամաբանորեն հետևում է, որ այստեղ հանկարծակիության կամ անսպասելիության պահը գոյություն չունի: Հետևաբար, զոհն իր զոհի վերածվելը չի կարող արդարացնել դրանով: Անպատրաստվածությունը և համազգային մասշտաբով դիմակայելու անկարողությունը որևէ արդարացում չի կարող ունենալ, որովհետև դրա գինը տվյալ ժողովրդի կամ էթնոսի ոչնչացումն է:

Ասվածը հավասարապես վերաբերում է ցեղասպանության ենթարկված հայությանը, նրա ազգային, քաղաքական, կուսակցական և կրոնական գործիչներին:

Վիկտիմիզացիան ցեղասպանության, որպես մեդալի, մյուս երեսն է:

5. ԾԵՂԱՍՊԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԴՐՈՒՅԹԸ

Հայկական և հրեական, իսկ ապա նաև նրանց հաջորդած մյուս ցեղասպանությունների վերլուծության հիման վրա 1970–ական թվականներին ցեղասպանագիտության կողմից առաջ քաշվեց «ցեղասպան պետության», ինչպես նաև «ցեղասպան հասարակության» վերին աստճանի կարևոր տեսադրույթը:

Այս տեսակետը, որ մինչ այդ անհայտ էր գիտությանը, առաջ է քաշվել հայտնի ցեղասպանագետ Իրվինգ Հորովիցի[9] և պաշտպանություն գտել Յուրի Բարսեղովի[10], և այլ մասնագետների կողմից, ինչպես Լեո Կուպերը: Այդ խնդրի ուսումնասիրությամբ զբաղվում են նաև Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում:

Այս նոր տեսադրույթը, ինչպես հաճախ է պատահում գիտության մեջ, չի կարելի ասել, թե անվերապահորեն է ընդունվում բոլոր մասնագետների կողմից: Նա իր կողմնակիցների հետ միասին ունի նաև հակառակորդները, կան նաև մասնագետներ, որոնք առայժմ ձեռնպահ են մնում իրենց տեսակետն այդ հարցում հստակորեն հայտնելուց: Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ նա ոչ միայն գիտական նորություն է, այլև շատ համարձակ տեսակետ:

Ո՞րն է ցեղասպան պետության տեսադրույթի էությունը, ի՞նչ սկզբունքների վրա է նա խարսխվում:

9 **Irwing Horowitz,** State Power and Mass Murder, New Brunswick, 1976.

10 **Барсегов Ю.** Геноцид армян преступление по международному праву, Москва, «XXI век — Согласие», 2000.

Առաջին և կարևոր սկզբունքն այն է, որ ցեղասպանությունները պատահական չեն լինում: Նրանք ունեն տվյալ հասարակության ծոցում ձևավորված նկատելի և աննկատ, լատենտ, նախադրյալներ, որոնք ներքին և արտաքին բարենպաստ պայմանների դեպքում, անխուսափելիորեն դրսևորվում և հանգեցնում են կամ ցեղասպանության փորձերի կամ ցեղասպանության:

Երկրորդ, ցեղասպանությունը ոչ բոլոր պետություններում և հասարակություններում է դրսևորվում և հնարավոր լինում իրագործել: Դա հնարավոր է միայն յուրահատուկ կառուցվածք ունեցող հասարակություններում, այնպիսի պետություններում, որոնք տիպաբանորեն պատկանում են բռնատիրական վարչակարգ ունեցող երկրների շարքին: Այդ վարչակարգը կարող է լինել զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ռազմաֆեոդալական, դիկտատորական և կամ ամբողջատիրական: Սակայն այդ հանգամանքն ինքնին վերցրած դեռևս բավարար չէ ցեղասպանության համար:

Կարևոր հանգամանք են տեսական պոստուլատները, որոնց վրա խարսխվում է ցեղասպանություն իրագործող պետություն–հասարակությունը և նրա պաշտոնական քաղաքականությունը և գաղափարախոսությունը: Դրանց մեջ առաջնային է տիրապետող ազգի գերազանցության գաղափարը տվյալ պետության շրջանակներում բնակվող մնացած բոլոր ազգությունների նկատմամբ, մի կողմից, և «օտարածին» մարմիններից ազատվելու և էթնիկական առումով «մաքուր» և միատարր երկիր ստեղծելու հիմնադրույթը, մյուս կողմից: Եվ, ինչպես վկայում է պատմական փորձը, էթնիկապես «մաքուր» երկիր ստեղծելու այլ ուղի, քան բռնությունն է, գոյություն չունի: Իսկ բռնությունից մինչև ցեղասպանություն ընդամենը մի քայլ է միայն:

Սակայն ցեղասպան պետության համար անհրաժեշտ է նաև մեկ այլ նախապայման: Կարևոր է, որ տվյալ հասարակությունը ոչ միայն չընդվզի էթնիկական մաքրման դեմ, այլև ընդունի և պաշտպանի այդ քաղաքականությունն ակտիվ կամ պասիվ կերպով, կամ թեկուզ անտարբերություն դրսևորելով:

Այլ կերպ ասած, խիստ կարևոր է, որ տվյալ պետության ներսում չլինեն ցեղասպանությանը խոչընդոտող ռազմական, քաղաքական, կրոնական և հասարակական ուժեր:

Եթե այս բոլոր նախադրյալներն առկա են, ապա տվյալ պետությունը դասվում է ցեղասպան պետությունների շարքը:

Երբ մենք ցեղասպան պետության այս հասկացողությունը կիրառում ենք հայոց ցեղասպանության և հրեական հոլոկոստի առնչությամբ, ապա ակնհայտ է դառնում, որ դա միանգամայն սազում է XIX դարի և XX դարի առաջին քսանամյակի Օսմանյան կայսրությանը և XX դարի 30–40–ական թվականների հիտլերյան–նացիստական Գերմանիային:

Այս երկու պետություններն էլ բոլոր պարամետրերով համապատասխանում են ցեղասպան պետության տեսադրույթին:

Երկու երկրներում էլ գոյություն ուներ բռնատիրական ռազմաֆեոդալական (Օսմանյան կայսրություն) կամ դիկտատորական–ամբողջատիրական (նացիստական Գերմանիա) վարչակարգ:

Երկուսի համար էլ բնորոշ էր պաշտոնական ռասիստական գաղափարախոսության տիրապետությունը և համապատասխանաբար թուրքական և գերմանական ազգերի գերազանցության և բարձր լինելու, «օտար» ազգերից բռնությամբ Օսմանյան կայսրությունը և նացիստական Գերմանիան մաքրելու իշխանությունների հետաղիմական քաղաքականությունը:

Երկու երկրներն էլ կուտակել էին զանգվածային սպանությունների հարուստ փորձ և այդ բնագավառում հասել «բարձր կուլտուրայի»:

Եվ, վերջապես, երկու երկրների համար բնորոշ էր հասարակության կողմից նման քաղաքականության ընկալման ֆենոմենը:

Ցեղասպան պետությունը ողբերգություն է պատճառում ոչ միայն ենթակա ժողովուրդներին, այլև պատժում սեփական հասարակությանը, նրան, կամա թե ակամա, ոճրագործության մեղսակից դարձնելով:

Այդ բանը շատ լավ գիտակցեցին և ընդունեցին հետհիտլերյան Գերմանիայում: Դրա վկայությունն է հետհիտլերյան Գերմանիայի ղեկավարության կողմից Գերմանիայի մեղսակցության ճանաչումը և կանցլեր Ադենաուերի կողմից պաշտոնապես ներողություն խնդրելը հրեաներից՝ հոլոկոստի համար:

Այդ բանը դեռևս պետք է գիտակցեն և ընդունեն հետօսմանյան Թուրքիայում, որի ղեկավարությունը համառորեն ժխտում է հայոց ցեղասպանության փաստը: Սակայն ուզում ենք հավատալ, որ ժամանակակից Թուրքիայում, վաղ, թե ուշ, կհաղթանակի առողջ բանականությունը և կհայտնվի թուրքական Կոնրադ Ադենաուերը, որն իր մեջ ուժ գտնելով, կայցելի Էջմիածին և ներողություն կհայցի հայ ժողովրդից:

«Ցեղասպան պետության» վերաբերյալ ցեղասպանագիտության հիմնադրույթը ավելի հասկանալի է դարձնում հայոց ցեղասպանությունը ծնող պատճառները և նրա իրագործման հնարավորության շատ հանգամանքներ:

6. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - ԱՐՄԵՆՈՑԻԴ ԵՎ ՀՐԵԱԿԱՆ ՈՂՋԱԿԻԶՈՒՄ - ՀՈԼՈԿՈՍՏ

Ցեղասպանագիտությունը զգալի տեղ է հատկացնում տիպաբանության հարցերին, ելնելով այն ճիշտ դրույթից, որ չնայած ընդհանուր գծերին, յուրաքանչյուր կոնկրետ ցեղասպանություն ունի իր տարբերակիչ գծերը և յուրահատկությունները: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ ցեղասպանություններն իրագործվում են տարբեր պատմական ժամանակաշրջաններում, տարբեր էթնիկական և մշակութային միջավայրերում, տաբեր վարչակարգերի կողմից, տարբեր մեթոդներով և այլն: Դա անխուսափելիորեն իր կնիքն է դնում ցեղասպանությունների տեսակի վրա:

Ժամանակակից ցեղասպանագիտությունը, ինչպես նշվեց, խարսխվում է առաջին հերթին հայկական ցեղասպանության և հրեական հոլոկոստի պատմական փորձի և օրինաչափությունների վրա: Դրանք իրենց բնույթով, կատարման ծավալներով և մեխանիզմներով կարելի է համարել դասական: Ուստի մասնագետներն ամենից հաճախ համեմատության եզրերն անց են կացնում նրանց միջև: Եվ այդ կապակցությամբ տարբեր մասնագետների կողմից արտահայտվել և շարունակվում են արտահայտվել տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ:

Մենք նույնպես, ելնելով ցեղասպանագիտության հիմնադրույթներից, կցանկանայինք համեմատություն անցկացնել արմենոցիդի և հրեական հոլոկոստի միջև, և մեր տեսակետն արտահայտել դրա վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ շատ հաճախ կիրառվում է «արմենոցիդ» –հայասպանություն եզրը, որն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել արաբ պատմաբան, հայոց ցեղասպանության լավագույն հետազոտողներից մեկը՝ Մուսա Պրենսը: Նրա կարծիքով արմենոցիդը ոչ միայն XX դարի առաջին ցեղասպանությունն է, այլև «ամենագենոցիդային գենոցիդը»[11]:

Արմենոցիդը, իհարկե, լրիվ տեղավորվում է գենոցիդ հասկացողության շրջանակներում, սակայն, որպես ամենագենոցիդային գենոցիդ, ունի իր տարբերակիչ գծերը: Դա կարելի ցույց տալ օգտվելով կոմպարատիվ՝ համեմատական մեթոդից, համեմատելով արմենոցիդը մյուս դասական ցեղասպանության՝ հրեական հոլոկոստի հետ: Այդ համեմատությունից ակներև են դառնում հետևյալ հանգամանքները:

Առաջին, հայերի ցեղասպանությունն իրագործվել է նրանց բնօրրանում, նրանց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Հայերն այստեղ են ձևավորվել որպես ժողովուրդ և ազգ, այստեղ է ընթացել նրանց պատմությունը:

Հրեաների ցեղասպանությունն իրագործվել է Գերմանիայում, որը նրանց ոչ բնօրրանն էր և ոչ էլ պատմական հայրենիքը:

Այս հանգամանքը հայկական ցեղասպանությանը տալիս է մի առանձնակի ողբերգականություն:

Երկրորդ, հայերի ցեղասպանությունը կատարվել է եկվորների՝ թուրքերի կողմից: Հանրահայտ է, որ թուրքական քոչվորական ցեղերը մերձավորարևելյան–անդրկովկասյան տարածաշրջանում հայտնվել են XI դարից, երբ նրանք Ալթայից և Կենտրոնական Ասիայից դուրս գալով և ալիք առ ալիք տարածվելով, նվաճեցին և իրենց ճանապարհին կործանեցին տարածաշրջանի քաղաքակիրթ բնիկների ստեղծած պետական կազմավորումները և մշակութային կենտրոնները և դրանց փլատակների վրա ստեղծեցին իրենց զանազան պետական կազմավորումները, որոնց մեջ ամենաուժեղը դարձավ օղուզների ցեղախմբի ղեկավար Օսմանի հիմնած պետությունը, որը հետագայում վերածվեց Օսմանյան կայսրության:

Նորելուկ եկվորները սկզբում նվաճեցին Արևմտյան Հայաստանը, իսկ այնուհետև իրագործեցին նրա բնիկ բնակչության՝ հայերի ֆիզիկական ոչնչացումը:

Հրեաների պարագայում իրավիճակն այլ է: Նրանք Գերմանիայում եկվորներ էին: Այս դեպքում նրանց հոլոկոստը՝ ողջակիզումն իրականացվեց բնիկների՝ գերմանացիների կողմից:

Երրորդ, ցեղասպանության հետևանքով հայերն ունեցան ոչ միայն վիթխարի մարդկային զոհեր, այլև կորցրեցին հայրենիք՝ Արևմտյան Հայաստանը: Դա, կարելի է ասել, կրկնակի կորուստ էր:

Հրեաները հոլոկոստից հետո չկորցրեցին հայրենիք, քանի որ նրանք եկվորներ էին, իսկ նրանց պատմական հայրենիքը գտնվում էր Եվրոպայից դուրս, աշխարհի այլ մասում՝ Մերձավոր Արևելքում: Ընդհակառակը, հոլոկոստից հետո հրեաների մոտ ուժեղացավ ամեն գնով իրենց սեփական ազգային հայրենիքն ունենալու և գաղափարը, և ձգտումը: Նրանց այդ ձգտումը, որը լիցքավորվել էր հոլոկոստի ոճրագործության արդյունքում, ի վերջո հաջողությամբ պսակվեց 1948 թ., երբ հռչակվեց Իսրայելը որպես հրեաների ազգային պետություն: Հրեաները ձեռք բերեցին և տարածք և պետություն, ի հակադրություն արևմտահայերի, որոնք կորցրեցին տարածք և այնտեղ իրենց պետականությունը կառուցելու հնարավորություն:

Չորրորդ, արմենոցիդից հետո հայերի փրկված բեկորները ցրվեցին համարյա համայն աշխարհով մեկ: Նրանք հայտնվեցին բոլոր մայրցամաքներում: Այդպես ձևավորվեց հայկական նոր սփյուռքը:

Հրեաների մոտ հակառակ պրոցեսն սկսվեց: Հրեական ստվար սփյուռք գոյություն ուներ և մինչև հոլոկոստը: Իսկ հոլոկոստից և Իսրայել պետության կազմավորումից հետո սկսվեց հրեաների ազգային համահավաքը: Միլիոնավոր սփյուռքահրեաներ աշխարհի տարբեր ծայրերից մեկնեցին Իսրայել,

11 **Moussa Prince**, Un genocide impuni. L'Armenocide, Heidelberg Press–Lebanon, 1967, p. 26–27.

հաստատվեցին իրենց նորաստեղծ ազգային պետությունում՝ Իսրայելում, և սկսվեց իսրայելական ազգի կազմավորման պրոցեսը:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ ցեղասպանագիտությունը, չնայած նրա «երիտասարդ տարիքին», կարևոր նվաճում է ցեղասպանությունների ուսումնասիրության բնագավառում: Նա, որպես գիտական նոր ուղղություն, արդեն գրավել է իր հաստատուն տեղը հասարակական գիտությունների շարքում, և նոր հեռանկարներ բացել ցեղասպանության ֆենոմենի ըմբռնման, մեկնաբանության և գնահատության հարցում:

Ցեղասպանագիտության տեսադրույթները և մեթոդոլոգիան վստահաբար հաստատում են, որ այն, ինչ տեղի ունեցավ արևմտահայության հետ 1915 թվականին, ցեղասպանություն էր:

Այս հարցում նա կասկածի տեղ այլևս չի թողնում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 5

1. Ցեղասպանագիտության որպես գիտական նոր ուղղության նախադրյալները և ծնավորումը 7
2. Ցեղասպանագիտության հայկական նախարմատները 11
3. Պոլիտիցիդ կամ քաղաքական սպանություն 14
4. Դահիճ և զոհ 18
5. Ցեղասպան պետության տեսադրույթը 21
6. Հայոց ցեղասպանություն — արմենոցիդ և հրեական ողջակիզում — հոլոկոստ 25

Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Николай Оганесович Оганесян

ГЕНОЦИД АРМЯН В КОНЦЕПТУАЛЬНОЙ СИСТЕМЕ ГЕНОЦИДОЛОГИИ

(на армянском языке)

Изд. «Зангак–97», Ереван, 2002

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ Ս.Շ. Մկրտչյան
Տնօրեն՝ Մ.Վ. Մնացականյան
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ա.Ա. Բաղդասարյան
Համակարգչ. ձևավորումը՝ Գ.Ա. Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 2 տպ. մամուլ, 0.96 հրատ. մամուլ, 1.86 պայմ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ.՝ 54–89–32, 54–05–17
Ֆաքս՝ 54–06–07, էլ. փոստ՝ zangak@arminco.com
Տպագրվել է «Զանգակ–97» հրատարակչության տպարանում